*վիճակագրութիւնն եւրոպական դպրոցաց:*

*Գերմաներէն մանկավարժական լրագրոյ մը* (Repertorium für Pädagogik) *տուած տեղեկութեանց համեմատ՝ եւրոպական նշանաւոր տէրութեանց դպրոցներու թիւն հետեւեալն է: Գերմանիա 43 միլ. բնակչով՝ ունի 60.000 դպրոց 6 միլ. աշակերտով: Դպրոցի ծախքն իւրաքանչիւր բնակչին առանձինն կ'իյնայ 2 մարք 37 ֆէնիք: Գաղղիա 37 միլ. բնակչով՝ ունի 71.000 դպրոց 5 միլ. աշակերտով. իւրաքանչիւր բնակչի կ'իյնայ 1, 18 մարք դպրոցի ծախք: Սպանիա 17 միլ. բնակչով ունի 29.000 դպրոց 2 միլ. աշակերտով. դպրոցի ծախքն ամէն մէկ բնակչի կ'իյնայ 1, 12 մարք: Անգղիա 34 միլ. բնակչով՝ ունի 58.000 դպրոց 3 միլ. աշակերտով: Իւրաքանչիւր բնակչի դպրոցի ծախք կ'իյնայ 1, 49 մարք: Աւստրիա-Հունգարիա 37 միլ. բնակչով՝ 29.000 դպրոց ունի 3 միլիոն աշակերտով. իւրաքանչիւր բնակչի կ'իյնայ դպրոցի ծախք 1, 34 մարք: Իտալիա 28 միլ. բնակչով՝ 47.000 դպրոց ունի 2 միլ. աշակերտով. իւրաքանչիւր բնակչի դպրոցի ծախք՝ 67 ֆէնիք: Ռուսիա 74 միլ. բնակչով՝ 32.000 դպրոց ունի 1 միլ. աշակերտով. իւրաքանչիւր բնակչի դպրոցի ծախք 22 ֆէնիք:*

---

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

*Գրեթէ ամբողջ Յուլիս ամիսը զբաղեց Պուլկարիոյ իշխանին ընտրութեան դէպքը: Պուլկարք իրենց մտաց վրայ հաստատուն մնալով եւ ցանկալով միանգամայն երկրին անտէրնչութեան վերջ տալ՝ մեծ Սոպրանիէն գումարեցին ի Թիռնովոյ, ուր Յուլիսի 7ին միաբան ձայնիւ ընտրուեցաւ Սաքսէն-Քոպուրկ-Կոդայի Փերդինանդ իշխանը:*

*Բոլոր պատգամաւորք եւ ժողովուրդք բերկրեալ եւ ցնծացեալ այս յաջող ընտրութեան վրայ՝ սկսան կեցցէի աղաղակներով ողջունել իրենց նորընտիր իշխանը: Սոպրանիէի Գահերէցը Թոնչէվ յանուն պատգամաւորաց եւ Վարիչք ու Պաշտօնեայք տէրութեան՝ շնորհաւորութեան եւ յարգանաց հեռագիր ուղղեցին առ նորընտիր իշխանն:*

*Երկրորդ օրը Փերդինանդ իշխանն հեռագրաւ պատասխանեց, թէ շնորհակալ է Պուլկար ազգին շնորհաւորութեան եւ յարգանաց զգածմանց համար, եւ ի նշան շնորհակալութեանն՝ իւր կեանքը կը նուիրէ Պուլկար ազգին. կ'ապահովէ նաեւ զիրենք թէ պատրաստ է իսկոյն Պուլկարիա երթալու՝ երբ իւր ընտրութիւնն Բարձրագոյն Դռնէն եւ Պետութիւններէն ընդունուի:*

*Փերդինանդ Սաքսէն-Քոպուրկ-Կոթայի իշխանը ծնած է յամի 1861 Փետր. 26ին ի Վիեննա: Իշխանն այն զարմէն է, որուն անդամները թագաւորական հարստութիւններ հիմնարկած են: Ազգականութեան եւ խնամութեան կապով կապեալ է Եւրոպայի թագաւորազարմ տանց հետ, ինչպէս Բելգիոյ՝ Փորթուկալի՝ Գաղղիոյ՝ Անգղիոյ՝ Աւստրիոյ՝ Իտալիոյ եւ նաեւ Պրազիլիոյ տիրող տանց հետ: Իշխանն՝ ինչպէս ամէն օրագիրք գովութեամբ եւ ղրուատեօք կը յիշատակեն, շատ հանճարեղ եւ գիտնական է. միանգամայն խոհեմ քաղաքագէտ եւ մեծամեծ ձրիւք ու սիրալիր յատկութեամբ զարդարեալ անձի մ'ամենայն սեպհականութիւններն ունի, այնպէս որ թէ գրութիւններն եւ թէ պատասխանները սոյն վճիռներն կը հաստատեն:*

*Սոպրանիէի Գահերէցն հեռագիրն ընդունելուն պէս՝ նիստ մը կը գումարէ, որուն մէջ նոյնը մեծ հաճութեամբ ու ծափահարութեամբ կը կարդացուի, եւ իսկոյն պատգամաւորութիւն մը կ'ընտրուի ընտրութեան արձանագիրն անձամբ նուիրելու եւ ազգին մեծարանքն ու յարգանքն բերանացի մատուցանելու: Այս պատգամաւորութեան յարեցան այլ պատգամաւորք, որոնք Վիեննայի մերձակայ Էպէնթալի ղղեկին մէջ իշխանէն եւ իւր մօրմէն սիրալիր ընդունելութիւն գտան եւ գոհ ու զուարթ սրտիւ մեկնեցան:*

*Այժմ խնդիրն կը մնայ Բարձրագոյն Դրան եւ Պետութեանց հաւանութեան վրայ: Բարձրագոյն Դուռն Պուլկար կառավարութենէն իսկոյն տեղեկագիր մ'ընդունելով՝ խոստացած է Պետութեանց ծանուցանել իրն շրջաբերականաւ մը եւ լսելեայն յայտնած է թէ ինքն սկզբամբ հակառակութիւն չունի, մանաւանդ թէ հաւան է: Իսկ Պետութեանց պաշտօնական պատասխաններն պաշտօնապէս հրատարակուած չեն. միայն ըստ բաւականի հիմնական լուրն այս է, որ բաց ի Ռուսիոյ եւ ըստ մասին ի Գաղղիոյ, մէկալ Պետութիւնք համամիտ են ընդունելու այն ընտրեալն, որ ըստ Պեռլինի դաշնագրոյն ընտրուած է: Ռուսիոյ կառավարութիւնը տարիէ մը վեր բռնած ընթացից համեմատ, այժմեան Սոպրանիէի ամէն ընտրութիւններն անվաւեր կը համարի, եւ կ'ուզէ որ այս Սոպրանիէն լուծուի. իսկ նոր Սոպրանիէն հաւանութեամբ Պետութեանց գումարուի եւ այնպէս ընտրէ:*

---

*Եւրոպայի այլ կողմերը հանգստեան օրերու պատճառաւ գրեթէ ի քուն մնացած է. միայն Օսմանեան Պետութեան եւ Անգղիոյ մէջ Եգիպտոսի նկատմամբ ղրուելու դաշնադրութիւնը խափանուելով, Մեծ Վէզիրը Քիամիլ փաշա եւ ուրիշ քանի մը պաշտօնեայք հրաժարական տուած են. թէպէտ եւ կ'երեւայ որ Վեհափառ Սուլթանն ընդունած չէ այս հրաժարումն: Իսկ դաշնադրութեան խափանման Անգղիոյ վրայ ըրած ազդեցութիւնն այժմէն չենք կարող բացորոշ յայտնել, սակայն կը գուշակուի թէ ծանր հետեւութեանց դուռ կրնայ բացուած ըլլալ:*

---

*Ինչպէս ուրիշ անգամ յիշատակած էինք, բոլոր օրագիրք բաւական ժամանակէ վեր կը զբաղէին Հռոմայ քահանայապետական Աթոռոյն եւ Իտալիոյ կառավարութեան հաշտութեան խնդրովն: Արդարեւ բաւական ապշեցուցիչ եւ այլանդակ գաղափարներ տեսնուեցան, որոնց համար յայտնած էինք, թէ անհնական եւ կամայական լրեր են: Այժմ օրագրաց մէջ հրատարակուելով Կարդինալ Ռամբոլլա Ս. Քահանայապետին Դիւանապետին առ նուիրակս գրած շրջաբերականը՝ կրնանք բացորոշ ծանուցանել Լեւոն ԺԳ. ի վճիռն, թէ Հռոմայ Գահն իւր ԺԹ դարէ վեր Հռոմէական կալուածոց վրայ օրինաւորապէս ստացած իրաւունքէն երբեք չի հրաժարիր. սակայն այս հիման վրայ յեցած՝ պատրաստ է եւ կը փափաքի բանակցիլ Իտալիոյ կառավարութեան հետ, որպէս զի օր մը յառաջ զրաւ տրուի այս աղետալի դրութեան, որ Իտալիոյ նիւթական եւ բարոյական վնաս է եւ Քահանայապետական աստիճանին նուաստութիւն: Կը զգուշացընէ եւս Իտալիոյ կառավարութիւնն, որ Հռոմայ Գահուն անունն օտար Պետութեանց առջեւ չաղարտէ, Քահանայապետին վրայ անհաշտ ոգւոյ սեպհականութիւն դնելով:*

---

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ
Հ· ՌԱՓԱՅԷԼ Վ· ՊԷՐՃՆՋ

Ի ՎԻԵՆՆԱ· ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ· (W. HEINRICH)

digitised by A.R.A.R.@